ԾԱԾԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ՎԻՄԱԳՐԵՐՈՒՄ

ՍՈՒՐԵՆ ՍԱՂՈՒՄՅԱՆ

Ծածկագրությունն ու զարդագրությունը տարածված են միջնադարյան ձեռագրերում և, մասամբ, վիմագրերում։ Ձեռագրերի ծածկագրերին ու զարդագրերին տարբեր առիթներով անդրադարձել են անվանի հայագետներ Մ. Բրոսեն[1], Գ. Տեր-Մկրտչյանը[2], Հ. Աճառյանը[3], Հ. Տաշյանը[4], Ե. Լալայանը[5], Լ. Խաչիկյանը[6], Վ. Հակոբյանն ու Ա. Հովհաննիսյանը[7], Լ. Դուռնովոն[8], Ա. Մնացականյանը[9] և ուրիշներ։ Հայկական ծածկագրության ուսումնասիրման և դրանց հրատարակման առումով արժեքավոր է հատկապես Ա. Աբրահամյանի «Հայկական ծածկագրություն» շահեկան աշխատությունը[10]։

Հակառակ սրան, վիմադիր ծածկագրությունն ու զարդագրությունն անհամեմատ քիչ են ուսումնասիրված։

Ծածկագրությունն ունի գործնական-կիրառական նշանակություն և վիմագրության ասպարեզ է թափանցել առնվազն VI դ.։ Ծածկագրերի վերծանումը կարևոր է ծածկագրեր կրող ճարտարապետական կառույցների և քանդակագործական արժեքների ստույգ ժամանակը որոշելու, պատմական զանազան դիպվածներ, իրողություններ մեկնաբանելու առումով։ Դրանք օգնում են պարզելու ազգային մշակույթի որոշ երևույթների, ուղղությունների գոյացման պատճառները, փոխազդեցությունները, գրիչների կամ պատվիրատուների հակումները, ինչպես և գաղտնագրության տակ հանդես եկող գիտնականների, արվեստագետների, կառուցող ու վերակառուցող վարպետների կամ մեկենասների կյանքի մանրամասները, որով և ստանում են աղբյուրագիտական և պատմական կարևոր նշանակություն։

---

1 „Mélanges Asiatiques", t., V. *1868, էջ 65—77։*

2 Գ. Տեր-Մկրտչյան, Ներսիսյան ծածկագիր («Արարատ», 1888, էջ 35—49)։

3 Հ. Աճառյան, Հայոց գրերը, Վիեննա, 1928, էջ 460—488։

4 «Ցուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Մխիթարյանց ի Վիեննա», կազմեց Հ. Տաշյան, Վիեննա, 1895։

5 «Ցուցակ հայերեն ձեռագրաց Վասպուրականի», կազմեց Ե. Լալայան, պրակ Ա, Թիֆլիս, 1915։

6 «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1950, «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Ա, կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1955, «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Բ, կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1958, «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Գ, կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1967։

7 «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Ա, կազմեցին՝ Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան, Երևան, 1974, «Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ», հ. Բ, կազմեցին՝ Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան, Երևան, 1978։

8 «Հայկական մանրանկարչություն», Երևան, 1967, «Հայ ձեռագրային զարդանկարչություն», կազմեց Լ. Ա. Դուռնովո, Երևան, 1978։

9 Ա. Մնացականյան, Հայկական զարդարվեստ, Երևան, 1955։

10 Ա. Գ. Աբրահամյան, Հայկական ծածկագրություն, Երևան, 1978։

Դեռևս տասնամյակներ առաջ անվանի հնագետ-վիմագրագետ Կ. Ղաֆադարյանը վերծանել է Ավանի VI դ. երկլեզվյան փոխարինագիր ծածկագիր արձանագրությունը[11]։ Ուշագրավ է նաև Արծվանիկի X—XI դդ. ծածկագրությունը[12], որը բացել են Ա. Աբրահամյանը և Ա. Շահինյանը։ Ծածկագրության անսովոր բարդ և, թերևս, օրինակը չունեցող համակարգ է առաջարկել Պ. Մուրադյանը՝ Եղվարդի բազիլիկայի դժվարընթեռնելի ու հողմահարված արձանագրության վերծանության մեջ[13]։ Առտնին պրպտումների ընթացքում հայ վիմագրերում մենք ևս հայտնաբերել ենք մի շարք ծածկագրեր։ Դրանք փոխարինագիր, գումարգիր, եղբայրագիր, շրջագիր և այլ բնույթի ծածկագրեր են, որոնք այստեղ ներկայացվում են հաջորդաբար՝ ըստ ամենայնի պահպանելով ժամանակագրությունը։ Փորձ է արվում վեր հանելու նաև նորաբնույթ ծածկագրեր («հավերժ անվերծանելի կամ բացակա անդամով») և դրանց թվում դասելու զարդագրությունը։

Նորահայտ ծածկագրերից առաջինը գտնվում է Երևանի Ավան թաղամասի պատմական գերեզմանոցի հարավ-արևելյան եզրում, ոչ մեծ տապանաքարի վրա։ Նրա հարավային ճակատի խաչաքանդակները ներառող կամարաղեղների միջև պարզ ու ընթեռնելի գրված է ՃԸԻԼՓՎԸԺ (գծ. 1)։ Քանի որ դրանք ինքնին իմաստ չեն արտահայտում, ուստի բնական էր այդ տառերի մեջ ծածկագիր որոնելը։ Եվ, հիրավի, գրիչների նախասիրած եղբայրագիր ծածկագրության խառը տարբերակով ընթերցվում է՝ ՄԷԼԻՔՍԷԹ։ Պարզվում է, որ ծածկագրված է քարգործ վարպետի անունը։ Նշանավոր արվեստագետ Մելիքսեթը, որի ստեղծագործությունները ցրված են Հայաստանով մեկ, գործել է XVI դ. վերջում[14]։ Նրա ձեռակերտ խաչքարերից մի բեկոր նկատել ենք հենց նույն գերեզմանոցում՝ ՄԷԼԼԻՅՔԼՍԷՅԹ ԿԱՄՁՄՈՂ հանրածանոթ ստորագրությամբ[15]։

Նույն սկզբունքով է ծածկագրված նաև Սանահնի վանքի գրատան հյուսիսային պատի արևելյան անկյունի (մարդահասակ բարձրությամբ) ցայժմ աննկատ մնացած հետևյալ ծածկագիրը. ՐՏՎԲՏԴԼՎԽԲՋԲՆՆՎԼՓՎԼ (գծ. 2), որը ստույգ բացվում է՝ ՏԼԷՅՐ ՍԱՐԳԻՍ, ԾԱՌԱՅ ՅԼԻՅՍԼՈՒՍՅԻ ՔԼՐԻՍՏՈՅՍԻ[16]։ Ծածկագիրը, հավանաբար, պատկանում է Սանահնի վանքի առաջնորդ Սարգիս եպիսկոպոսին, որը վերանորոգել է համալիրը, այդ թվում՝

---

11 Կ. Ղաֆադարյան, Ավանի երկլեզվյա ծածկագիր արձանագրությունը, Երևան, 1945։

12 Ա. Գ. Աբրահամյան, Ա. Ն. Շահինյան, Արծվանիկի հայերեն նորահայտ ծածկագիրը և նրա վերծանությունը («Պատմա-բանասիրական հանդես», 1975, № 3, էջ 113—125), Ա. Գ. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 180—189։

13 Պ. Մուրադյան, Եղվարդի ծածկագիր արձանագրությունը («Երևանի համալսարան», 1974, № 1, էջ 36—39), Նույնի՝ «Պալեոգրաֆիկ ուսումնասիրության» արդյունքները («Երևանի համալսարան», 1976, № 1, էջ 47—52)։

14 Ս. Գ. Բարխուդարյան, Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ, Երևան, 1963, էջ 155—157։

15 Վերջին տարիների պրպտումների ընթացքում հայտնաբերել ենք Մելիքսեթի մի քանի ստեղծագործություններ ևս (տե՛ս մեր «Մուղնու ս. Գևորգ եկեղեցին և նրա վիմագրերը» հոդվածը («Էջմիածին», 1977, Ա, էջ 50—51)։

16 Ի դեպ Տ, Տ, Խ, Ջ, Փ տառերից բացի, մնացած տառանիշները փոխարինում են ոչ թե իրենց հաջորդող, այլ նախորդող տառերին։



Գծանկար 1—8



Գծանկար 9—13

սույն ծածկագիրը կրող գրատունը։ Վանահայր Սարգիսը մահացել է 1681 թ. և թաղված է վանքի ներքին ժամատանը[17]։

Երրորդ ծածկագիրը Թեոդոսիայի ս. Հրեշտակապետաց եկեղեցու ներսի սյուպանաքարերից մեկի վրայինն է։ Արձանագրությունը սրտաճմլիկ մի դրվագ է նորահարս Խանիպիքեին բաժին ընկած խորշակ-մահվան մասին. արձանագրության վերջին երկու տողերում ծածկագրված է թիվը. ՃԱՆԱՉ ԹՎՈՅՍ Ի ԲԱՑ ՀԱՅԵՍ ՁՎԵՑ և ՏԱՍՆԵԱԻԹ...[18]։ Այստեղ թիվը հնարամտորեն ծածկագրված է նանաչ բառի տակ, որը տվյալ դեպքում դյուրությամբ կարող է շփոթմունքի տեղիք տալ, քանի որ դրանից առաջ չկա այն որպես թիվ ընկալելու հուշող որևէ միտք, ինչպես սովորաբար պատահում է ձեռագրերում։ Այսուհանդերձ, մասնագետի համար դժվար չէ կռահել, որ դա թիվ է, որովհետև նշված է, որ նրանից պետք է հանել վեց և տասնեաւք՝ որից հետո միայն կպարզվի Խանիպիքեի մահվան ստույգ տարեթիվը։ Ծածկագիրը վերծանվում է այսպես՝ [Ճ (100)+Ա (1)+Ն (400)+Ա (1)+Չ (700)—(6+17)= 1202—23=1179։ Սրան ավելացնելով հայկական թվականի տարբերությունը (551), կստանանք պահանջվող թվականը՝ 1730[19]։

Յուրատիպ ծածկագրություն է տառերի գլխիվայր փորագրությունը, ինչպիսին հանդիպում է Հաղբատում[20]։ Հայտնի է նաև Կուրթանի (Ստեփանավանի շրջան) դերեղմանոցի խաչքարի (գծ. 4) արձանագրությունը, որի ստորին երկու տողերը գրված են աջից ձախ, գլխիվայր և շրջված։ Այս արձանագրությունը հայտնի է Ս. Ջալալյանի[21] և ապա Ե. Լալայանի[22] ընթերցմամբ։ Ակնառու սրբագրումներով վերահրատարակում ենք այն. ՇԼԵ (1086) ԹՎԱԿԱՆԻՍ ՀԱՅՈՑ, ԹԱԳԱՎՈՐՈՒԹ/ԵԱՆ ԿՈՒՐԻԿԵԻ, ՀԱՐԱՋՄԱՏ Ե/ՂԲՇԱՐՔ ՍԱՐԳԻՍՍ, ԴԱՎԻԹՍ, ԳՈՐԳԻ ՆՈՐՈԳԵՑԱՔ ՁՍ[ՈՒՐՅԲ/ ԳՈՐԳՍ ԲԱՐԵԽՈՍ ՈԳՈՅ ՄԵ/ՐՈՅ[23]։

Նույն՝ աջից ձախ սկզբունքով են գրված Սևանա կղզում գտնված խաչքարի 1448 թ. արձանագրության երեք տողերը։ Արձանագրությունը գարա-

---

17 Կ. Ղաֆադարյան, Սանահնի վանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1957, էջ 119, արձ. 36։

18 Արձանագրությունն ամբողջովին հրատարակել ենք մեր «Համառոտագրությունը հայ վիմագրության մեջ» հոդվածում («Լրաբեր», 1975, № 4, էջ 72)։

19 Ղրիմի ս. Խաչ վանքի գլխավոր եկեղեցու արձանագրություններից մեկի տարեթիվը ևս գրված է վիմագիր հուշարձաններում սակավ հանդիպող հետևյալ ձևով. ԵՒ ԵՍ ԽԱՍՊԵԿ, ԵՐԱ]Ռ[Ա]Յ ԽԱՉԻՆ, ԵՐԿԻՐՊԱԳԻ Ս[ՈՒՐ]Բ ՆՇԱՆԻՆ Ի ԹԻՎ / ՀԱՅՈՑ ՄԵԵ ՏՈՒ/ՄԱՐԻՆ, ՈՐ ԷՐ ՀԱՋ/ԱՐ ՆՍՈՒՆ ԵՒ ՄԻՆ (գծ. 3), այսինքն՝ (1000+90+1)+551=1642։

20 Կ. Ղաֆադարյան, Հաղբատ, Երևան, 1963, էջ 218, արձ. 106։

21 Սարգիս վարդ. Ջալալյանց, Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան, Տփղիս, 1842, Մասն Ա, էջ 123։

22 Ե. Լալայան, «Ազգագրական հանգես», 1896, գիրք VII և VIII, էջ 339։

23 Մենք հակված էինք ակնարկվող ԳՈՐԳՍ ընկալելու գորգ (խալիչա, բեմի վարագույր) իմաստով, սակայն լեգվաբան-վիմագրագետ Ս. Ավագյանի հավաստմամբ բառիս այս իմաստով կիրառումն այդ շրջանում չի վկայված։ Այս դեպքում ակնարկը վերաբերում է եկեղեցուն (ս. Գևորգ), որը նորոգել են երեք եղբայրները և իբրև դրա առհավտչյա, կանգնեցրել խաչքար, երևույթ, որը տարածված էր միջնադարում։ Այս կարծիքը ընդունվելու դեպքում ս. Գևորգը (վիմագրում բառիս վրա չկա համառոտագրման նշան) պետք է համարել սույն խաչքարի արևմտակողմի կիսավեր մատուռը։

սկզբին խնամքով ընդօրինակել ու հրատարակել է Գ. Տեր-Մկրտչյանը[24], հետաքրքիր, թեև ոչ անվերապահ ենթադրություններով։

Գլաձորի համալսարանի պեղումների ընթացքում հայտնաբերված խաչաբեկորի ստորին մասի արձանագրության մնացորդը՝ վերջին տողը, աջից ձախ շրջագիր ծածկագրությամբ, արտագծել և մեզ է տրամադրել ճարտարապետ Ս. Մաթևոսյանը (գծ. 5), որն է Թ. ՈԱ—1152.../... Ի ՔՈՒՄ /ԳԱԼԸՍՏԵԼԱ/ՆԴ[25],

Ծածկագրության յուրահատուկ ձևերից է շրջադրությունը, երբ որոշ բառեր, կամ մի քանի տառեր դրվում են շրջված, թեև պահպանվում է ձախից աջ դրության կարգը։ Այսպես, Թալինի Կաթողիկե եկեղեցուց հյուսիս ընկած բարձունքի վրայի ամրոցի մերձակա տապանագրերից մեկի ԳՐԻԳՈՐ (գծ. 6)՝ անձնանվան Գ տառերը փորագրված են շրջված։ Նման գրաձևը բավականին տարածված է Գեղարքունիքի XV—XVII դդ. վիմագրերում, որը, մեր կարծիքով, կաղապարային վրիպում է և ոչ թե կանխամտածված ծածկագրություն։

Վիմագրերում հանդիպում է ծածկագրման մի պարզունակ ձև, երբ արձանագրության մեջ հիշատակվում է նվիրատուն կամ պատվիրատուն, սակայն բաց է թողնվում պատարագ ստացողի կամ ննջեցյալի անունը։ Այսպես, Վարդենիսի շրջանի Լճավան գյուղի հարավային կողմում, Գթաշեն գյուղատեղիի խոշոր տապանաքարերից մեկի հյուսիսային և արևմտյան ճակատների վրա արձանագրված է[26]. ՈՒԼՈՒԽԱԹՈՒՆ, ԴՈՒՍՏՐ ԽՈՒՏԻՊԱՂՋԻ, ԿԱՆԿԵ/ՑԻ ՁՏԱՊԱՆՍ Ի Վ՚ԵՐԱ ՈՐԴՈ ԻՄՈ. Թվ. ՋՁԲ—1533 (գծ. 7)։ Արդ, թե ինչ է Ուլուխաթունի որդու անունը, հայտնի չէ. ժամանակակիցներին թվացել է, թե բոլորը նրան ճանաչում են ու անունը չեն գրել։ Այսպիսով, փաստորեն գործ ունենք հավերժ անվերծանելի կամ բացակա անդամով ծածկագրության հետ, որի վերծանման ոչ մի բանալի՝ մատենագրական կամ վիմագրական լրացուցիչ տվյալ գոյություն չունի։

Գթաշենի ավերակ եկեղեցու մոտի միաշար խաչքարերից 7-ը կանգնեցրել է նույն Ուլուխաթունի եղբայր Թարխանը։ Խաչքարերից մեկի խաչախորանից վերև փորագրված է տարեթիվը[27]. Թվ. ՋԿԵ—1516, իսկ ստորին մասում՝ հետևյալ արձանագրությունը (գծ. 8). ԱՄՍՈՒԱՆԸ ՈՂՂՈՅՐՄԻ Խ/ՈՒՏԱՊԱԽՇԻՆ/։ ԵՍ՝ ԹԱՐԽԱՆՍ, ԿԱՆՐԿՆԵՑԻ ։Է։ (7) ԽԱՉԱՄԲ ԴՍՏ/ԵՐՆ ԻՄ ԵՒ ԾՆԱԼԻՂԱՅՑ ԻՄՈՑ, ԵՂԲԱՒՐՆ։ Ինչպես դիտվում է, այս դեպքում էլ բացակայում են Թարխանի մերձավորների անունները, որոնց մասին ակնարկվում է արձանագրության մեջ։

Զորագյուղի (Մարտունու շրջան) մի խաչքարի արձանագրության մեջ անհայտ են երեք անձանց անունները (գծ. 9). Ի ՈԿԹ (1220). /ԱՍԱԹՍ Կ/ԱՆԿԵՑԻ ՁԽԱՉՍ ԾՆՈՂԱՑ ԻՄ/ՈՑ ԵՒ ԱՄՈՒՍՆՈ. ՈՐ ԿԱՐԴԱՅՔ ՅԻՇԵՑԵ/Ք Ի ՔՐԻՍՏՈՂՄ ԵՒ ՁԻՍ ՅԻՇԵՑԵՔ, ԱՂՄԷՅՆ։ Իսկ Կապտավանքի (Շամշագինի շրջան) արև-

---

24 Գալուստ Տեր-Մկրտչյան, Աջից ձախ հայ գրություն («Շողակաթ» հայագիտական ժողովածու, Վաղարշապատ, 1913, էջ 137—141)։ Խաչքարն այժմ գտնվում է Հայաստանի պատմության պետական թանգարանում։

25 Ի դեպ, այս ձևով են տառերը փորագրված կնիք մատանիների վրա, քանզի դրոշմելիք դրանք ստանում են կանոնավոր դիրք։

26 Այստեղի արձանագրություններից 14-ը դուրս են մնացել «Դիվանից», իսկ հրատարակվածների մի մասն էլ թերի է (պրակ IV, էջ 297—301)։

27 «Դիվան հայ վիմագրության», պրակ IV, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան, Երևան, 1973, էջ 298, արձ. 1235։

մրտյան մուտքի վերևի XIII դ. արձանագրությունն իր անորոշությամբ բացառիկ հուշարձան է. չկա գործող որևէ անձ և այս առումով այն առեղծվածային՝ բացակա անդամներով ծածկագրություն է (գծ. 10). ՄԻԱՅԲԱՆԵՑԱՔ ԷԿԵՂԵՑԻՍ, ԱՌԱՋՆՈՐԴՔՍ ԷՏՈՒՆ Բ (2) ՊԱՏՐԱՐԱԳՈ ԾԱՌԶԱՐԴԵԱՐԻՆ. ԿԱՏԱՐՈՒԹՔ ԱՒՐՇՆԻՆ ՅԱՏՍՈՒԹՈՅՆ, ԽԱՓԱՆՈՒԹՔ ԴԱՏԻՆՈ. ՈՐՁԱՅՓ ՄԷՔ ԿԵՆՅԴԱՆԻ ԵՄՈՒՔ՝ ՄԵՐՈՒ ԾՆՈՂՈՒՑՆ։ Հայտնի չէ, թե ովքեր են միաբանել եկեղեցուն, ովքեր են նրանց ծնողները և ովքեր՝ վանքի առաջնորդները[28]։ Այսպիսի օրինակները չափազանց շատ են բոլոր ժամանակների վիմագրերում։ Սակայն, որքան էլ տարօրինակ է, արձանագրություններում ծածկագրմանը զուգընթաց առկա են իմաստի կրկնակի, եռակի պարզեցման, բացահայտման դեպքեր։ Այսպես, օրինակ, հանրահայտ է, որ միջնադարյան արվեստում համընդհանուր տարածում ունի չորս ավետարանիչ-

Նկ. 1

ների պատկերագրությունը։ Հայկական մանրանկարչության ու քանդակագործության ասպարեզում տարածված է հատկապես դրա առաջին տարբերակը, երբ Մատթեոսին, Մարկոսին, Ղուկասին և Հովհաննեսին հաջորդաբար փոխարինում են մարդու, առյուծի, եզան և արծվի կերպարանքով նրանց խորհրդանշանները։ Նման քանդակներ հաճախ են հանդիպում խաչքարերի, եկեղեցիների թմբուկների կամ առագաստների վրա (Քանաքեռ, Նորատուս, Գնդեվանք, Արենի, Ջուղա)։ Թեև պատկերների մոտ ավետարանիչների անունները գրված չեն, հայ արվեստի պատմությանը ծանոթ յուրաքանչյուր ոք գիտի, որ պատկերված են նրանք։ Նմանօրինակ ստեղծագործություններից մեկը (Նորավանքի խաչքարի քիվի վրայինը) ներկայացնում ենք այստեղ (Նկ. 1).

28 Արձանագրությունից բավականին վերև կան ԿԱՄԱՒՆ ԱՅ ԵՍ ՎԱՐՀԱՄ ԵՒ... ԲԷԿՍ, ՈՐ/ԴԻ ՇԱՊՈՒՀՈՅ տողերը, որոնք կարող են հիշյալ վիմագրի առաջին մասը լինել՝ ինչպես ենթադրել է Գ. Սարգսյանը («Էջմիածին», 1957, № ԲԳ, էջ 57)։ Այս դեպքում հարկ կլինի մասամբ վերանայել մեր կարծիքը։

Կոմպոզիցիայի կենտրոնում Քրիստոսն է, նրա կողքերին՝ ավետարանիչների խորհրդանշան քանդակները։ Բուսապտղային զարդահենքի վրա պատկերված ստեղծագործության եզրերին հասակով մեկ կանգնած Հովհաննեսի և Մարիամի բարձրաքանդակներն են (XIII—XIV դդ.), թեև նրանց անունների հիշատակությունը չկա։ Սակայն ընդունված այս կարգը հաճախ խախտվել է։ Այսպես, Մուղնու ս. Գևորգ եկեղեցու (կառուցված 1664—1670 թթ.) թմբուկին (գրսից) քանդակված են ավետարանիչների խորհրդանշանները՝ անվանագրությամբ։ Ստորև ներկայացնում ենք դրանցից մեկը՝ Մատթեոս ավետա-



Նկ. 2

րանիչի քանդակը՝ անվան հետ (նկ. 2)։ Առինջի ամրոցում պահպանվում է իր նախնական տեղից ընկած, Հովհաննեսին խորհրդանշող արծվաքանդակը (գծ. 11), որի երեք եզրակողերին արձանագրված է. ՐՍՏԵՓԱՆՈՍ ԵՊՐԻՍԿՈՊՈՍ ՆԿԱ/ՐՈՂ ՅՐԻՇԵՑԷՔ Ի ԼՔՐԻՍՏՈՍ։ ԹՎ. ՋԼ (Ա—1501։/ ՅՈՀԱՆԷՍ ԱԻԵ/ՐՏԱՐԱՆԻՉ, ԱՐԾԻՒ։ Ուրեմն, Ստեփանոս նկարողը վստահ չլինելով, որ արծվաքանդակը կընկալվի որպես Քրիստոսի ամենասիրելի աշակերտի խորհրդանիշ, գրել է նաև նրա անունը՝ Հովհաննես և ապա ավելացրել է արծիվ բառը, ջանալով հասկացնել, որ պատկերված արծիվը խորհրդանշում է Հովհաննես ավետարանիչին։ Ս. Բարխուդարյանն ականատեսի ստուգությամբ նկարագրել է Առինջի ամրոցը[29], բայց արծվաքանդակի արձանագրությունը մեջ է բերել Մ. Սմբատյանցից, որը, այլ վրիպումներից զատ, Ստեփանոս նկարող արտահայտությունը ընթերցել է Յովհաննէս[30]։ Վիմագրական և ձեռագրա-

29 Ս. Բարխուդարյան, Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ, էջ 149։

30 Մ. Սմբատյանց, Գեղարքունի, Էջմիածին, 1895, էջ 247։ Արծվաքանդակը ներկայումս երկատված է, արձանագրության որոշ տառեր՝ կոտրված։ Դրանք լրացրել ենք հետևելով Մ. Սմբատյանցին։

կան տվյալների վկայությամբ Ստեփանոս եպիսկոպոս Առնջեցին համբավավոր նկարիչ-արվեստագետ էր։ Մասնավորապես հայտնի են նրա ձեռավորած մի շարք ձեռագրերը 1494—1496 թթ. Առինջում և Սևանի Դեմդեմաշեն (Դգմաշեն) գյուղում[31]։

Սրբերի քանդակների մի այլ անվանագրման դեպք կա Մշկավանքում։ Արվեստի կատարյալ նմուշ է եկեղեցու մուտքից ձախ տեղադրված պատկառագրու խաչքարը (նկ. 3)՝ [ՏԷ]Ր Ա[ՍՏՈՒԱ]Ծ ՈՂՈՐՄԵԱՑ ԹԱՇՏԻՆ ԵՒ



Նկ. 3

ԻՒՐ ԾՆՈՂԱՑՆ/, ՈՐ ՁԽԱՁՍ ԿԱՆԳՆԵԱՑ Ի ԹՎԻՍ ՀԱՌՑ ՁԽ (1291) արձանագրությամբ։ Հիասքանչ բարձրաքանդակներին միահյուսված անվանագրություններն են՝ ԳԱԲՐԻԵԼ, ՍԼՈՒՐՅԲ Ա[Ս]ՏՈՒԱ[Ծ]ԱԾԻՆ, ՅԼԻՍՈՒՅՍ ՔԼՐԻՍՏՈՅՍ, ՍՄՈՒՐՈՅԲ ՅՈՎԱՆՆԷՍ, ՄԻՔԱԵԼ, թեև նրանց ով լինելն առանց այդ էլ ակնհայտ է և կարող էին չանվանադրել, ինչպես վարվել են խաչի հորիզոնական թևերից վերև քանդակված լուսատուների խորհրդանշանների հետ։

Նույն հուշարձանի գավթում կա մի այլ հետաքրքիր խաչքար, որի մանրանկարային թեմաներով արված քանդակների մոտ հիշատակագրված է՝ ՍԼՈՒՐՅԲ ԽԱՉՍ ԲԱՐԷ[ԽԱՒՍ] ԳՈՒԼԲՈՒՄԻՆ ԻՒՐ.../, ՀՐՀՇՏԱԿ ԳԱԲՐԻԷԼԻ ԱՒԵՏԻ/ՔՆ ՄԱԼՐՅԻԱՄՈ. Յ[Ի]ՍՈՒՅՍ ՔՐԻՍՏՈՅՍ/. Ի/ ԹՎ. ՌՃԱ (1652). ԿԱՁՄՈՂՂ ԽԱՉԱՏՈՒՐ (գծ. 12)[32]։

Արժանահիշատակ է բավականին ուշագրավ մի փաստ ևս։ 1653 թ. շնորհալի արվեստագետ Տրդատը հորինել է մի խաչքար՝ վրան քանդակելով քրիստոնեական կրոնին առնչվող զանազան մանրամասներ[33]։ Այս առումով խաչքարը բացառիկ տեղ է գրավում հայկական արվեստի պատմության մեջ և, փաստորեն, չունի իր կրկնօրինակը։ Խաչքարի ստորին մասում ներկայացված է Քրիստոսի կողմից դժոխքի դռների կործանման և Ադամի ու Եվայի փրկու-

---

31 «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Գ, էջ 199—200, 226—229։

32 Թեմատիկայի ու հորինվածքի կրկնությամբ Խաչատուրի ձեռակերտ խաչքարերից մեկն էլ գտնվում է Կիրովականի եկեղեցու բակում։

33 Ս. Գ. Բարխուդարյան, Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ, էջ 176—177։

թյան պատկերը։ Խիստ արտահայտիչ է հեթանոսությունն ու հետադիմությունը պատկերող օձերի նիզակահարումը։ Նույն վարպետի կերտած խաչքարերից մեկն էլ գտնվում է Կամոյի Հացառատ թաղամասի հյուսիսային կողմի մատուռի մոտ (գծ. 13), քիվին՝ [ՍՈՒՐԲ] ԽԱՉԻՍ ԲԱՐԼԵ/ԽԱՒՍ ՏԷՐ ԳԱՍՂՊԱՐԼԻՆ. իսկ քիչ ցած՝ ԵՍ ՏՐՏԱՏ ԿԱՉԼՄՅՈՂՍ./ ԹՎ. ՌՃ (1651)[34] հիշատակագրությունը։ Այս խաչքարի վրա էլ խաչելության պատկերն է, իսկ Նրանից ցած՝ դեպի Հիսուսը մեկնած ձեռքերով Մարիամի և Հովհաննես ավետարանիչի քանդակները։ Թեմատիկ առումով սա նախորդ խաչքարի կրկնությունն է։ Պատկերները դրամատիկական են, հուզումնալի և նրանց մասին ոչ մի հիշատակություն չկա, թեև դրանից հարյուր տարի առաջ Սիմեոն կազմողը Կամո քաղաքի «Դարի գլուխ» գերեզմանոցի մեծարվեստ խաչքարերից մեկի ստորին մասում քանդակելով նույն մոտիվները, անհրաժեշտ է համարել տալ գրավոր պարզաբանումներ։ Այստեղ դեպի Տերը պարզած ձեռքերով քանդակների մոտ գրված են ոչ միայն նրանց անուններն ու կոչումները (Մարիամ աստվածածին, Հովհաննես ավետարանիչ), այլ նաև՝ թե ինչ են անում։ Քանդակների թեման նույնն է, իսկ դժոխքի մուտքի վրա փորագրված է դուռն[35]։ Սյուժեի պարզեցման նման դեպքերը մասսայական տարածում չեն ստացել, բայց դրանք առկա են։ Փաստերն արձանագրված են հատկապես երկրի քաղաքական, տնտեսական ու մտավոր կյանքի անկման ժամանակաշրջաններում (նկատի չունենանք «խաչելության» խաչքարերը), և կարծեք, արվեստագետները երբեմն կասկածել են, թե գաղափարական բովանդակություն չի ընկալվի, ուստի և առանձնահատուկ ջանքեր են գործադրել՝ ստեղծագործության իմաստն ու ոգին կողմնակի միջոցների կիրառմամբ բացահայտելու համար։ Եվ դա բնական էր. օտար տիրապետության դեմ պայքարելու կոչերը պետք էր հասցնել ողջ ժողովրդին։ Նման թեմաները ժամանակի արվեստագետներն արծարծում էին քրիստոնեության հաղթանակը հեթանոսության դեմ ապահովելու, իսկ ուշ միջնադարում՝ օտար լծից ազատագրվելու միտումով։

Իսկական արվեստի ամեն մի գործ, իր էությամբ, ժամանակի հրատապ հարցերի լուծման կոնկրետ կամ այլաբանական արտահայտությունն է։ Այս խաչքարերի հեղինակներն ամենից առաջ հետապնդել են համազգային ազա-

---

34 Ճ տառից հետո քարը ջարդված է և չի բացառվում միավոր թվատառի գոյությունը։

35 Խաչքարի արձանագրությունը հրատարակել է նաև Ս. Բարխուդարյանը («Դիվան», գրքակ IV, էջ 62, արձ. 236), սակայն ավելորդ չենք համարում վերահրատարակել այն որոշ լրացումներով ու սրբագրումներով.

Ս[ՈՒՐԲ] ԽԱ[Չ]Ս ԲԱՐԼ[Ե] Խ[ԱՒ]Ս ՈՎԱ[Ն]ԷՍ ԻՐԻՑԻՆ։
ԿԱՉՄՈՂ ԱՆԱՐԾԱՆ [ՍԻ]/ՄԷՈՆ. ԹՎ. Ռ (1351),
ՄԱՐԻԱՄ /Ա[Ս]ՏՈՒԱ[Ծ]ԱԾ[Ի]Ն, Ո[Հ]ԱՆԷՍ ԱՒ/ԵՏ/ ԱՐ[Ա]Ն[Ի]ԶՆ/
ԱՂ[Ա]Ղ[Ա]Կ[ԵՆ] /ԵՆ ԸՆԴ/ԴԵՄ ԽԱՉ[Ի]Ն ՓՐԻԱՏՈՒՍԻ/։
ԽԱՉ/ԵՑ Վ[Ա]Ս[Ն] ԱԴԱՄԱՑ/ Դ[Ի]Խ[Ո]Ն? Վ[Ա]ՍՆ Ո[Ր]ՈՑ[Ի]
ԽԱՉ/ԷՆ ԴԺՈԽՆ ԻՋԱՒ/, ԱՋԱ/Տ[Ե]Ա[Ց] ԱԴԱՄ
ԵՒ ԾՆՈՒ[Ն]Դ[Ի]Ն Ն[Ո]Ր[Ա]։ ԴՈՒ/Ռ։

Ս. Բարխուդարյանի աղորեն բառի փոխարեն առաջարկում ենք աղաղակեն. նախ որ խաչքարի վրա հստակ պահպանվում է ԱՂՂԵՆ տառաշարքը և ապա, կարծում ենք, խոսքը վերաբերում է ոչ թե աղոթքին, այլ խաչված Տիրոջը աղաղակ-պաղատանքով դիմելուն, որը Ճ (100) Սաղմոսի՝ «Աղաղակեցէք դէպի Տէրը» պատվիրանի վերարտադրությունն է։

տության գաղափարը, մի ավանդույթ, որը տևականորեն պահպանվել է խաչքարագործության մեջ։ Այդ քանդակների լեյտմոտիվն է՝ ինչպես Քրիստոսը պայքարեց չարի դեմ, կործանեց դժոխքը, այնպես էլ ժողովուրդը պետք է պայքարի և կործանի վիշապատեսք տիրողներին։

Սրբերի կամ ավետարանական պատկերների մոտ կատարված անվանագրություններն ու հակիրճ բացատրությունները տարածված են նաև հայկական մանրանկարներում, որմնանկարներում, Արենիի, Նորավանքի, Սպիտակավորի հուշարձանների բարավորների քանդակներում։

Հայ միջնադարյան արվեստում ուշագրավ երևույթ է զարդագրությունը, որը որոշ տարածում ունի նաև վիմագրության մեջ։ Միջնադարի մեղվաջան քանդակագործները խնամքով ու համբերատարությամբ զարդանկարել են շինությունների շքամուտքերը, քիվերը, պատուհանները և բազմազան խաչքարեր։ Այդ քանդակների վրա նրանք երբեմն հմտորեն հյուսել են նաև տառեր, որոնք նկատվում և ընթերցվում են դժվարությամբ, երբեմն՝ մեծ ջանքերի գնով և, այս իմաստով էլ դրանք կարելի է համարել ծածկագրություն։

Վիմագիր զարդագրությունը քանդակագործական արվեստի յուրահատուկ ճյուղն է և ունի տեսական, կիրառական ու գեղագիտական արժեք։ Արվեստագիտի հախուռն երևակայությամբ ծնված զարդագրերը միաժամանակ մտածողության տիրապետող ուղղությունների և էվոլյուցիոն զարգացման ընթացքի առհավատչյան են, որոնցում ակնհայտ է (կրոնական հասկացությունների համեմատությամբ) աշխարհիկ՝ բուսապտղային թեմաների ու երկրաչափական ձևերի բացահայտ առավելությունը։

Վիմագրության մեջ զարդագրությունը մեծ տարածում չի ստացել, իսկ նրա հնագույն օրինակները XII դ. այն կողմ չեն անցնում։ Ինքնատիպ են Սևանի ավազանի, Ավանի, Շիրակի, Վայոց ձորի և այլ վայրերի հուշարձանների վիմագրերում հանդիպող զարդագրերը։ Հանրահայտ են Հառիճավանքի գլխավոր եկեղեցու (1201) քիվի հարթ մակերեսի վրա արված (նկ. 4) ԷՐԷՅՐ ԱՐՍՏՈՒԱՅՈՒ ՈՂՈՐՄԵԱ ԱՇԽԱՏԱՒՈՐԱՑ. ԱՄԷՆ զարդագրությունը[36], Տաթևի վանքի խաչքարերից մեկի (նկ. 5) ՁՏՐ ՀԱՅՐԱՊԵՏ ՄԻՒՆԵԼԱՅՑ ԷՊԻՍԿՈՊՈՅՍ ՅԼԻՅՇԷՔ ՔԻ. ԹՎ. ՁԺԸ (1269)[37] և Նորավանքի Բուրթելաշեն եկեղեցու (1339) քիվի (նկ. 6) ԲԻՒՐԹԷԼ ԻՇԽԱՆԱՑ ԻՇԽԱՆ[38] բուսապտղային քանդակներին ձուլած ուռուցիկ ծաղկագրերով արձանագրությունները և այլն։

Զարդագրության գեղեցիկ նմուշներ կան նաև Առինջի պատմական գերեզմանոցում։ Դրանցից մեկը խաչաբեկորի վրա է (նկ. 7). ԹՎԼԻՅՍ ՊՂԷ (1448). ԶԳՐԻԳ/ՈՐ ԿԱՁՄՈՂՅՍ ՅԻՇԵՑԷՔ[39]։ Տվյալ դեպքում մեզ հե-

---

36 Հրատարակիչը արձանագրությունը մեջ է բերել ազատ ընթերցմամբ (Ղ. Ալիշան, Շիրակ, Վենետիկ, 1881, էջ 160)։ Այս հիշատակությունը գրավել է նաև Կ. Ղաֆադարյանի ուշադրությունը (Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հ. II, Երևան, 1948, էջ 204)։

37 «Դիվան հայ վիմագրության», պրակ II, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան, Երևան, 1960, էջ 31, արձ. 56։

38 Գարեգին Վարդապետ, Քարտեզ հայ հնագրության («Շողակաթ» հայագիտական ժողովածու), «Դիվան հայ վիմագրության», պրակ III, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան, Երևան, 1967, էջ 240, արձ. 783։

39 Առինջում, Զաղավանքում, Ավանում, Քանաքեռում պահպանվում են նույն Գրիգորի, ինչպես նաև Տեր Ավագի, Մելիքսեթի, Ստեփանոսի, Աստվածատուրի, Ուհաննեսի, Հակոբի, Հովհաննեսի, Դավթի, Ովանեսի, Հրապետի և Քիրամի ստորագրությամբ մի շարք խաչքարեր։



Նկ. 4

Նկ. 5

Նկ. 6

տաբրբրում են հարթ մակերեսի գեղազարդ տառերը և Զ-երի շրջագլուխների նեղվածքում պատկերված Քրիստոսի ու Հակոբ Նիսիբիսեցի առաքյալի հարթաքանդակները։ Բեղ-մորուքով գիմաքանդակների համար Զ-երի շրջողակները լուսապսակի դեր են կատարում։ Զարդագրության այս ձևը բացառիկ երևույթ է ոչ միայն վիմագրության մեջ։ Ուշագրավ է նաև խաչքարերից մեկի ելնդատտառ հիշատակությունը՝ դրոշմված բուսական ու երկրաչափական մոտիվնե-

Նկ. 7

Նկ. 8

րով միահյուսված զարդերի վրա (նկ. 8)։ Նման դեպքերում, իբրև կանոն, Ց և Շ տառերն ուղղակի դրոշմված են միմյանց վրա, հիշատակությունը համառոտ է՝ ԱՐՂՈՒԹԷՍ ՅԼԻՅՇԼԵՑԷՅՔ Ի ՔՐԻՍՏՈՅՍ, իսկ խաչաքանդակի ստորին կոթունի վրա արձանագրված է ԹՎ. ՋԺ (1461)։

Գեղագիտական հաճույք են պատճառում Հավուց Թառի արևելյան պարսպապատի վերաշինության ժամանակ շարվածքի մեջ մտցված խաչքարի

Նկ. 9

Խորանի թվատառերը (նկ. 9)։ Քիվի արձանագրության շարունակությունը թեև հնարավոր չէ ստուգել, սակայն ենթադրությամբ լրացնելով այն, ստանում ենք՝ [ՍՈՒՐ]Բ ՆՇ[ԱՆ]Ս Տ[Լ]ԷՐՈՒՆԱԿԱՆ :Բ: Յ[Ո]Վ[ՀԱՆԷՍԻՆ Լ]ԷՐ ՔԱ-ԻԱՐԱՆ]։ ՀԴ[ԱՒԻԹ ԿԱՁՄ[ՈՂ]Յ[10] [ԹՎ. Ջ[ԻԵ (1476)։

10 Շնորհալի վարպետի կերտած խաչքարերը տարածված են Էջմիածնից.—Հավուց Թառ։ Դրանցից մեկն Ավանում է, մյուսը գտնված է Էջմիածնի բաղիլիկայի արևմտյան պատի մեջ, հարթված քիվը՝ առանց արձանագրության է, իսկ խաչի վերին թևի երկու կողմում՝ ելնդատառ՝ Թվ. Ջ[Ի[Ա—1472[, ԴԱՒԻԹ ԿԱՁՄ[ՈՂ]։ Հռիփսիմե եկեղեցու մոտ կուտակված խաչաբեկորներից մի քանիսը ևս Դավթի գործերի փշրանքներն են։ Այստեղ ընկած է կարմիր ներկով պատված, միահյուսված քանդակներով տուֆակերտ մի խաչքար, քիվին՝ Ս[Ո]ՒՐ[Բ ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱՒՍ ՄԱՐԳԱՐ[Ի]Ն[Յ], ավելի ցած՝ ԿԱՁՄՈՂ ՄԱՆՎԷ[Լ արձանագրությամբ։ XV—XVI դդ. Նորահայտ և շնորհալի քանդակագործներից է նաև Մանվելը։

Ինքնաձիգ զարդագրեր են Լենինականի Ամենափրկիչ եկեղեցու արևելյան պատուհանները շրջանակող առաքյալների ու սրբերի անվանագրությունները (նկ. 10)։ ՍՈՒՐԲ, ՅԱԿՈԲ, ՍՈՒՐԲ ՍԻՄՈՆ/, ՍՈՒՐԲ ԹԱԴԷՈՍ, ՓԻԼԻՊՊՈՍ ՍՈՒՐԲ/, ԱՌՈՒՐԲ ՂՈՒԿԱՍ, ՄԱՐԿՈՍ



Նկ. 10

ՍՈՒՐԲ։ Ա.ջ պատուհանի սրբաքանդակների մոտ՝ ՍՈՒՐԲ ԿԻՐԱԿՈՍ, ՍՈՒՐԲ ԲԱՐԹՈՂԻՄԵՈՍ/, ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲՈՍ, ՍՈՒՐԲ ՊԵՏՐՈՍ/, ՍՈՒՐԲ ՅՈՀԱՆՆԷՍ, ՍՈՒՐԲ ՄԱՏԹԷՈՍ։ Մինչև ոտքի թաթերը հասնող ծալքավոր ճոխ զգեստներով բարձրաքանդակները և հարակից զարդաքանդակները փաստորեն լցնում են ուղղանկյուն խորանները և միայն լուսապակների երկու կողմերի ողորկ մասերում դրոշմվել են ձևավոր գրերը[41]։

Ավելորդ չէ ներկայացնել մի բացառիկ դեպք ևս։ Հայ արվեստի սքանչելիքներից է Մամիկոն Մամիկոնյանի պատվերով 1279 թ. հորինված Ամենա-

41 XIX դ. կառուցված այս եկեղեցին ճարտարապետական ձևերով ու արտաքին հարուստ հարդարանքով կրում է Անիի դպրոցի ազդեցությունը։ Արևելյան պատուհանների կամարների

փրկիչ խաչքարը, որն Ուրծաձորից տեղափոխվել է Էջմիածին։ Խաչքարի վրա (նկ. 11) առկա են գաղտնագիր զարդագրություն՝ արևի և լուսնի պատկերների անվանագրությամբ (ԱՐԵԳԱԿՆ, ԼՈՒՍԻՆ), ինչպես նաև (տիրոջ աջը պատկերող ձեռքի և հոգին մատնանշող թռչնակերպ քանդակների մոտ) ԱՂ ՏՄԷԱՌՆՆ, ՀՈԳԻ ԱՐՍՏՈՒԾՈՅՑ բացահայտող հիշատակությունները[42]։

Նկ. 11

Այսպիսով, ծածկագրությունը վիմագիր տեքստերին ուղեկցել է նրանց ողջ գոյության ընթացքում։ Վիմագրերում գործածվել են երկլեզվյան, եղբայրագիր, գումարգիր, շրջագիր, հավերժ անվերծանելի կամ բացակա անդամով և այլաբնույթ ծածկագրեր։

Զարդագրությունը վիմագրության բնագավառում երևան է եկել հասա-

վերին եզրին Քրիստոսի (ձախից) և Աստվածածնի (աջից) քանդակներն են՝ անբաժան պահապան հրեշտակներով, իսկ ստորին մասերում՝ չորս ավետարանիչների խորհրդանշաններն են։ Դրանց միջև՝ մնացած 8 սրբերի բարձրաքանդակներ են՝ հյուսիսից հարավ հետևյալ հաջորդականությամբ. ՍՈՒՐԲ ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԽԱՄԱՐՏԻՍ, ՍՈՒՐԲ ՍԻՄՕՆ, ՍՈՒՐԲ, ՑԱՎԿՈՎԲ, ՍՈՒՐԲ ՓԻԼԻՊՊՈՍ, ՍՈՒՐԲ ՑԱՎԿՈՎԲՈՍ, ՍՈՒՐԲ ԲԱՐԹՈՂԻՄԵՈՍ, ՍՈՒՐԲ ՊԵՏՐՈՍ, ՑԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ, ՍՈՒՐԲ ԱՆԴՐԷԱՍ, ՍՈՒՐԲ ԹԱԴԷՈՍ, ՍՈՒՐԲ ՑՈՎՀԱՆՆԷՍ, ՍՈՒՐԲ ԹՈՎՄԱՍ, ՍՈՒՐԲ ՄԱՏԹԵՈՍ, ՍՈՒՐԲ ՄԱՏԱԹԻԱ, ՍՈՒՐԲ ՊՕՂՈՍ։ Այս սրբերի անունները հիշատակված են նաև Սև ժամի հարավային մուտքին։

42 Խաչքարի քանդակագործությունն ու արձանագրությունը համակողմանիորեն մեկնաբանել է Գ. Հովսեփյանը՝ իր «Հավուց Թառի Ամենափրկիչը և նույնանուն հուշարձաններ հայ արվեստի մեջ» հանրահայտ աշխատության (Երուսաղեմ, 1957) 68—72 էջերում։

բակական զարգացման որոշակի աստիճանում և գործածվել է վերջին 700 տարիների ընթացքում, երբեք չստանալով համընդհանուր տարածում։ Դրա գոյացումն ու կիրառությունն աղերսվում է հատկապես վերածնության դարաշրջանին, երբ աշխուժացող ժողովրդական արվեստն ու աշխարհիկ մտածողության կենարար հոսանքը, իբրև սոցիալ-տնտեսական նորովի տեղաշարժերի հետևանք, ուղիներ էին որոնում միստիկական պատկերացումների դեմ մղվող ծանր, բայց հաստատուն պայքարում։

КРИПТОГРАММЫ И ВЯЗИ В АРМЯНСКИХ ЛИТОГРАФИЯХ

СУРЕН САГУМЯН

Резюме

Криптограммы и вязи, распространенные в средневековых рукописях и частично в литографических надписях, весьма мало изучены. В настоящее время обнаружен и расшифрован целый ряд литографических криптограмм из Еревана, Санаина, Гладзора и др. Криптограммы употреблялись в литографиях, начиная с VI в.—в форме *«փոխարինագիր»* (литорев), *զումարգիր* (мудрых литорев), *«եղբայրագիր»*, *«շրջագիր»*, *«հավերժանվերծանելի»* и др. Вязь же является одной из разновидностей криптограмм.

Истолкование и издание литографических надписей, криптограмм и вязей имеет исключительную источниковедческую, историческую и научную ценность.